տանէն Ռուստաց, քանզի ի Եւրոբա[յ] երբեմն վճիռ հատանէն զմի ի հազարից, բայց ի Ռուստաց՝ եւ ոչ մի։

— Նախ պատմեցին ինձ, թէ այր ոմն անուանի աւազակ՝ ճանփայ խաբանօղ, ըմբռնի երկիցս եւ խրատի։ Բայց մինչ ըմբռնի ի երրորդումն, կամին մահացուցանել, քանզի այնպէս սահման կայ ի միշի նոցա, որ յերբոր ըմբռնէ գողն, առաջի անգամն ձաղէն օղն նորա եւ թողուն, երկրորդ անգամն հատանեն զմէկ դիու պինչն, բայց երրորդ անգամն մինչ ըմբռնին գնայ, այնժամ մահացուցանեն։ Նմանապէս այս աւազակն մինչ ըմբռնեցաւ երրորդ անգամն, հրամայեցաւ մահացնել։ Իբրեւ լաւ ավազակն այն վճիռն, կոչեց լռելեայն զգպիրն ատենին, որոյ ձեռին էր յիւր բանն, խոստացաւ տալ նմա 40 ֆլօրի, եթէ ազատիցեր զինքն ի մահուանէ։ Յանձն առէր դպիրն ի լուսանալ առաւօտուն հանից ի բանտէն այլ իմն բանտարգեալ եւ տարաւ կախեց ի փայտէ եւ արձակեց զաւազակն։

Հ. Որպէ՞ս ճանաչեն, թէ երկրորդ անգամ բռնված է գողն այն, որ ի երրորդին մահացնեն գնայ։

Պ. Առաջի անգամ, որ ձաղի սպի վիրացն երեւի ի վերայ օղանն, երկրորդն, որ նշանն երեւի ի վերայ ոընգոյն պնչաց։

Հ. Զի՞արդ կարէ երեւիլ ի վերայ յօղանն զսպի ձա/215b/ղանացն, այտ անհաւատալի է։

Պ. Միթէ կարծես, թէ նոցա ձաղն նմանի ձիու կամ այլոց ազգաց ձաղի նման, որ ոչ երեւեցի զսպի վիրացն, ո՛չ։ Նոցա ձաղն կաշի, երկու մատ լայն եւ երեք տակի, յերբոր կամենան ձաղիլ այրոք, նախ մերկացնեն այրն եւ հանեն զթեւերի խաղն ի թիկանց ոսկերին եւ դուրս ցգեն ի տեղւոյն եւ պրկեալ զերկու ձեռն կախեն ի բարցանց եւ զյոտն պրկեն ի գետնի. առնու դահիճն զիւր խարազանն ձաղին եւ հեռանայ անտի արշավմամբ գայ, մինչ մերց լինի, ցաթկէ ի վեր եւ երկու ձեռամբ ուժգին բախմամբ հարու ի վերայ թիկանցն ամենայն զօրութենէ իւրմէ ըստ լայնութեան խարազանին։ Առնու կաշին մարդուն ի թիկանցն եւ յիշանէ մինչի տափողքն առնն, ապայ այժմ տես, թէ այսպիսի վիրաց սպին կարէ անյայտանալ. այս կերպիւս 26 մինչ ի 32 անգամ հարուն՝ ըստ գործոցն չարութեան գողին։

Հ. Այժմ հաւատացի, որովհետեւ այտպէս է երեւի սպին եւ ոչ կարի աներեւութանալ, բայց ասայ ինձ, թէ այն անիրաւ դպիրն զիա՞րդ իշխեց զայտ գործ գործել վասն փոքր ինչ դրամից եւ ոչ երկեաւ, թէ յիմացվի։

Պ. Յերբոր աւազակն այն դարձեալ ժողովեց ի վերայ յիւր զցրուեալ զօրքն եւ սկսեց ըստ առաջնոյն կտրել զերթեւեկութիւն ճանապարհաց, այնժամ յիմացան եւ մինչ սկսեցին քննել եւ յիմանալ զպատ/216a/ճառն, այնժամ փախաւ զդպիրն։

Հ. Այտ այտպէս լինելոց էր, գիտեմ, ես այտ ոչ հարցանեմ ի քէն, այլ զայն զարմանամ, թէ յերբոր կախեցան այն միւս բանտարգելեալն ի տեղի աւազակին, անդ ո՞չ ոք ճանաչեց, թէ կախվօղն ոչ էր այն աւազակն, այլ այլ ոք։

Պ. Նոքայ, որ գողն կախեն ոչ ունին ծես ըստ այլոց ազգաց, որ կախեն ցիւր հանդերձօվն, յոչ այլ այսպէս սահման ունին, մերկացնեն այրն եւ ագուցանեն մէկ նոր սպիտակ շապիք եւ նոր վարտիս եւ մէկ կտոր սպիտակ վարշամակ ծածկեն ի վերայ գլխոյն եւ դիմացն, որպէս որ քող եւ ապայ թէ չուվանի օղն անցուցանեն ի վիզն եւ կախեն։ Որ ոչ երեւի յերես առնն եւ որ ոչ գոյ հանդերձ, զի ճանաչիցի, որպէ՞ս կամիս թէ ճանաչի։ Գիշերօվ հանեց այրն եւ տարաւ կախեց, առաւօտն տեսին այրն կախած, կարթացին թուղթն պատճառաց, տեսին անուն ավազակին եւ անցան։

Հ. Այտ այտպէս կարէ լինիլ, [հ]աւատացի, բայց այն անմեղ այրն, որ կախեցաւ, տէր չունէ՞ր, որ որոնէր, թէ զիարդ եղեւ այրն։

Պ. Զարմանամ, որ ըստ օրինացն ձերոց ոչ յիմանաս նոցայն, այլ աշխատիս հարցանել եւ զիս մղես ի աշխատանն, ոյք էն տիարքն կապելոցն, որք գան ի որոնել այս մէկ տարեն կամ երկու տարեն բան չէ, օվ գիտէ 10, 20, թէ երեսուն օրարվան էր բանտարգեալն այն, որ տարաւ կախեց փոխա/216b/նակ ավազակին, քանզի անթիւք էն բանտարգեալքն, որոց ոչ